ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 133-Ա

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N83-Ա ՈՐՈՇՄԱՆ ՈՒ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ,,ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ԱՆԺԱՄԿԵՏ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ,,ՀՀ Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքի թիվ 2 մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքից մի հատվածը Մասիսի համայնքապետարանի և ,,ԷԽՈ,, հաշմանդամ և սոցիալապես անապահով երեխաներին աջակցող հասարակական կազմակերպության /այժմ՝ «Էխո» հաշմանդամություն ունեցող անձանց իրավապաշտպան հասարակական կազմակերպություն/ միջև 2010 թվականի հոկտեմբերի 14-ին կնքվել էր ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր /գրանցված սեղանամատյանում՝ 2914-ով/, որը համատեղ դիմումի հիման վրա լուծվել է 07.09.2020 թվականին /հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 08.09.2020 թվականի NAS-08092020-03-0051, գաղտնաբառ՝ KCHHBF068F8P/, ինչի արդյունքում շենքի այդ հատվածը անհատույց չէր փոխանցվել մանկապարտեզին՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1. Մասիս քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N83-Ա որոշման մեջ գրառված ,,ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնքի թիվ 2 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի,, բառերը, թիվն ու կետադրական նշանները հանել և որոշմանը կից հավելվածից հանել 2-րդ տողը.

2	Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ	տիպային	1931.9 0.82հա	25802.7	191	6671.7	Շիրազի ն/թ 10

1.1. Լուծել սույն որոշման հիման վրա 24.02.2016 թվականին համայնքի և 2-րդ մանկապարտեզի միջև կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը:

2. Մասիս քաղքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի նոր թաղամասի թիվ 8/2 հասցեում գտնվող անշարժ գույքը /հողամասի կադաստրային համարը՝ 03-003-137-013, նպատակային նշանակությունը բնակավայրերի, օգտագործման նպատակը հասարակական կառուցապատման, հողամասի չափը 0.82 հա և շենքի կադաստրային համարը 137-013-001, նպատակային նշանակությունը հասարակական, օգտագործման նպատակը մսուր-մանկապարտեզ, մակերեսը 1931.9 քմ / անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրել ,,ՀՀ Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքի թիվ 2 մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը մանկապարտեզի լիցենզավորման ու գործունեությունը իրականացնելու նպատակով:

3. Օրենքով սահմանված կարգով կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել Մասիս քաղաքային համայնքի 2020 թվականի բյուջեի հաշվին:

5. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Ռուբեն Աթանեսյանի վրա:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԳԱՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱՋԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ